



ԿԱՊԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ /ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆ/
PUBLIC ENVIRONMENTAL INFORMATION CENTRE OF KARAN
КАПАНСКИЙ ОБЩЕСТВЕННЫЙ ЦЕНТР ЭКОЛОГИЧЕСКОЙ ИНФОРМАЦИИ

ՀՀ Մյասիկի մարզի Գեղարք գ. Նեղինի ձև. 09879-59-21

e-mail: karan_center@mail.ru

, info.karass.com

2014թ. Տարեկան գործունեության ամփոփ հաշվետվություն

2014թ.

2014թվականին Կապանի Օրհուս կենտրոնը շարունակել է իր առաքելը՝ ուղղորդվելով Օրհուսի կոնվենցիայով /ոեղեկատվության մատչելիություն, հասարակության ներգրավածություն որոշումների կայացնելու գործընթացում և արդարադատության մատչելիություն/: Հավատարիմ մնալով իր առաքելությանը, հարթակ են հանդիսացել քննարկումների, քաղաքացիական նախաձեռնությունների, հանդիպումների ու էկոլոգիական մշակույթի ձևավորման համար, կապող կամուրջ են հանդիսացել հասարակություն-SԻՄ ասպարեզում, հենվելով Օրհուսի կոնվենցիայի երեք հիմնարկությունների վրա՝ նպաստել շրջակա միջավայրի պահպանությանն ու համայնքների կայուն զարգացմանը:

Կապանի Օրհուս կենտրոնը այս տարի իր աշխատանքները սկսել է 2014թ. հունվարի 10-ից: Կենտրոնի աշխատանքը ընթացել է ըստ համակարգողների “Օտոայտությունների մատուցման պայմանագրի” հավելված 2-ում հաստատված տեխնիկական առաջադրանքի, որն էլ իր հերթին կազմվել է Օրհուս կենտրոնների ճանապարհային քարտեզի հիման վրա և համաձայնեցվել է “Բլեջան” ՀԿ-ի հետ:

Հաշվետու ժամանակահատվածում Կապանի Օրհուս կենտրոնը միայնակ կամ այլ կազմակերպությունների հետ համագործակցությամբ իրականացրել են 31 միջոցառում, այդ թվում տեղեկատվության մատչելիության ուղղությամբ 12 միջոցառում, հասարակական մասնակցության ուղղությամբ 2 միջոցառում, էկոկրթությանն ուղղված 10 միջոցառում, նախաձեռնել է 1 մամուլի, Տեսարանին քննարկում, մասնակցել է 1 հասարակական լսման, որոնց մասնակցել են ընդհանուր թվով 680, որից 309 տղամարդ և 371 կին: Ընդհանուր առմամբ տարածք է տրամադրվել 2 անգամ տարբեր քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների: /Վիցֆայլով ներկայացվում է վիճակագրական հաշվետվությունն ավելի մանրամասն:/

- Բոլոր Օրհուս կենտրոնների հետ համատեղ մամուլի ասուլիս չի կազմակերպվել, սակայն կենտրոնների միաժամանակյա համաձայնեցված աշխատանք է կատարվել Սևանից հավելյալ ջրբացթողումների մասին օրենսդրական նախաձեռնության շուրջ և ապրիլի 29-ին կազմակերպվել



Է Կլոր սեղան "Սևանը մեր օգնության կարիքն ունի" թեմայով:

Օրհուս կենտրոնը նախաձեռնել և աջակցել է էկոկրթական 10 միջոցառման կազմակերպմանը՝ ՀԿ-ների ներկայացուցիչների, ուսանողների, երիտասարդների, ուսուցիչների ներգրավմամբ, մարզում առկա շրջակա միջավայրի հիմնախնդիրների, ինչպես նաև Օրհուսի կոնվենցիայով երաշխավորված իրավունքների իրականացման վերաբերյալ:



-Տեղեկատվական տարբեր միջոցներով և եղանակներով՝ կայք-էջեր, տեղեկագրեր, հոդվածներ և այլն աջակցել է արդյաբնապահական տեղեկատվության տարածմանը և հանրության լայն շրջանակների իրագրության մակարդակի բարձրացմանը՝ նպաստելով բնապահական տեղեկատվության հասանելիությանն ու մատչելիությանը /օգտագործելով www.aarh.us.am կայքի, տեղական էլեկտրոնային ցանցերի և տարբեր ՋԼՄ-ների ընձեռած հնարավորությունները/:



Միջոցառումները լուսաբանում են “ՄՈՄԻ” և “ԽՈՒՄՏՈՒՓ” Հեռուստաընկերությունները, “Արմենպրես”-ի, “Առավոտ” և “Մյունսայց երկիր” թերթերի լրագրողները

-Հասարակության մասնակցության խթանման նպատակով նախաձեռնվել և համատեղ կազմակերպվել է 8 միջոցառում և ՕԿ հարթակ են ծառայել քաղաքացիական հասարակության կողմից իրականացնելու բնապահական, սոցիալ-տնտեսական, համայնքային անվտանգության ու համայնքային աջիատողների վերապատրաստման համար:



Կապանի ՕԿ դիմել է բնապահպանական տեղեկատվությունը տնօրինող աղբյուրներին և հանրության համար կարևոր բնապահպանական հարցերի շուրջ ստացած տեղեկատվությունը տարածել ինչպես կայքի, այնպես էլ ԷԼ.ցանցերի միջոցով:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վիճակի վերաբերյալ տեղեկատվությունը հավաքագրելու նպատակով Կապանի ՕԿ-ի կողմից ուղարկվել է 5 հարցում և 7 նամակ խնդրի բարձրացում: Կապան և Բարեկավան համայնքների համար կարևոր շրջակա միջավայրի աղտոտման վերաբերյալ խնդիրները բարձրացրել է Կապանի քաղաքապետարանի, ՀՀ Սյունիքի մարզպետարանի, “Հայջրմուղկոյուղի” ՓԲԸ, ՀՀ Բնապահպանության նախարարության առջև: Առկա տեղեկատվության հիման վրա կազմակերպել է հանրային քննարկում:





Կապանի Օրհուս կենտրոնը իր անմիջական մասնակցությունն է ունեցել շրջակա միջավայրի բարելավմանը ուղղված 2 ծրագրերի կազմմանը, կենտրոնում դրանց քննարկմանը: Համայնքներում կազմակերպել է դասընթացներ, պատրաստել է “դեգրադացված հողերի էկոհամակարգի վերականգնում անտառտնկման միջոցով” ծրագրի վերաբերյալ բուկլետներ և www.aarh.us.am կայքի ու ծրագրի արդյունքների հանրային քննարկման միջոցով տարածել առաջավոր փորձը: Տնկված 3500 վայրի տանձենիները և 3000 կովկասյան լորենիները տարիներ հետո համայնքի խմելու ջրի պաշարների պակասեցման վտանգը կանխարգելումից բացի համայնքի բնակիչները ունենալու են լրացուցիչ եկամուտներ/տասնձի չիր, մոտաբա, կթորեն օրի, իսկ լորենու ծաղիկներից կպատրաստեն բուժիչ թեյ, կբարձրանա մեղրի քանակը և որակը:



Կենտրոնը դարձել է հարթակ միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող բնապահպանական և համայնքային սոցիալտնտեսական խնդիրների քննարկման, դրանց բարելավմանը ուղղված լուծումների բացահայտման և իրականացված միջոցառումների արդյունքների քննարկման համար:

Կենտրոնում են անցկացվել Շվեդարիայի զարգացման գործակալության, “Արգումենտ” խորհրդատվական բյուրոյի, “Անդրսահմանային միավորված քարտուղարության համայնքային մասնակցային ֆինանսական ծրագրի” միջազգային փորձագետ Յասայ Վերմաստի հետ հանդիպումները, որոնց ընթացքում քննարկվել են ՀՀ Սյունիքի մարզի գյուղական համայնքների և Կապան քաղաքի համայնքային անվտանգության և սոցիալտնտեսական խնդիրներ և կոնկրետ կատարված միջոցառումների արդյունքների քննարկում: Օրհուս կենտրոնի համակարգողը “Անդրսահմանային միավորված քարտուղարության համայնքային մասնակցային ֆինանսական ծրագրի” հանձնաժողովի հասարակական անդամ է: Յասայ Վերմաստը, Կովկասի տարածաշրջանի ծրագրերի ղեկավարը՝ Օրհուս կենտրոնում երկօրյա հանդիպումներ ունեցավ համակարգողի հետ: Վերլուծվեց կատարված ծրագրի արդյունքները և քննարկվեց հետագա

ծրագրերի իրականացման արդյունավետության էլ ավելի բարձրացմանը ուղղված միջոցառումները:



Օրինա կենտրոնը հետևում է պետական մարմինների կողմից շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ որոշումների ընդունման գործընթացին և դրանց ընդունման վաղ փուլում, հասարակայնության պատշաճ մասնակցությունն ապահովելու նպատակով, տարածում է համապատասխան տեղեկատվությունն ու կազմակերպում ալթ քննարկումներին ակտիվ ՀԿ-ներին ու ռըրտի մասնագետների մասնակցությունը:

Կատարել է առաջարկություններ գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելու, լքված հանքերի ռիսկը նվազեցնելու, Ռոջի գետի բնապահպանական թողքը կարգավորելու և այլն):



Մասնակցում է հասարակական լոսումներին, հանրային քննարկումներին և տարածում դրանց ընթացքի, ինչպես նաև արդյունքում կայացված որոշումների վերաբերյալ տեղեկատվությունը:



Կազմակերպում է հասարակայնության և տեղական ինքնակառավարման մարմինների համա գործակցությանը նպաստող միջոցառումներ (համայնքի տարածքում առկա

բնապահպանական խնդիրների վերհանման ու համատեղ ուժերով դրանց լուծումներ տալու վերաբերյալ քննարկումներ, շարաթօրյակներ և այլն):



Կապանի Օրհուս կենտրոնը յուրաքանչյուր եռամսյակ հաշվետվություն է ներկայացնում ծրագրի ղեկավարին: Կենտրոնի կողմից միջոցառումների վերաբերյալ ներկայացնում է համառոտ հաշվետվություն և նյութեր/միջոցառման արձանագրությունը, լրատվարներ, ֆանցման թերթիկ, օրակարգ, հայտարարություն, շնորհանդես և այլն/ ծրագրի ղեկավարի և PR մենեջմենտին՝ ըստ սահմանված կարգի:

Աշոտ Ավագյան

Կապանի Օրհուս կենտրոնի համակարգող